ՏԵՂԵԿԱՆՔ

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառքներով օտարված հողամասերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ մարզպետարանների ներկայացված տեղեկատվության՝ 2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճուրդ վաճառքներով օտարվել է **1903 հա** հողեր՝ **2.436.693.071** հազ. դրամով:

Օտարումները համեմատաբար ակտիվ են եղել ՀՀ Արագածոտնի **/456 հա/,** ՀՀ Արմավիրի **/349 հա/ և** ՀՀ Արարատի /**335 հա**/ մարզերում, առավել պասիվ՝ ՀՀ Սյունիքի /**57 հա**/, ՀՀ Վայոց ձորի **/72 հա/ և** ՀՀ Շիրակի /**72 հա/** մարզերում:

	ՀՀ մարզ	Աճուրդների քանակը	Տարածքը /հա/	Գումարը /հազ. դրամ/
1.	Արագածոտն	366	456	322,055.0
2.	Արարատ	513	335	342,838.0
3.	Արմավիր	357	349	221,973.0
4.	Գեղարքունիք	175	137	111,184.0
5.	Լոռի	448	102	262,655.0
6.	Կոտայք	404	196	706,345.0
7.	Շիրակ	188	72	148,754.0
8.	Սյունիք	182	57	84,607.0
9.	Վայոց Ձոր	136	72	56,782.0
10.	Տավուշ	330	126	179,500.0
	Ընդամենը	3099	1903	2,436,693.0

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Ըստ իրականացված աճուրդների քանակի՝ ընդամենը ՀՀ - ում կազմում է **3099** միավոր, որից **1257** միավոր (**1686.4**հա) գյուղատնտեսական նշանակության, **1568** միավոր (**103.3** հա) բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության **203** միավոր (**56.2** հա), հատուկ պահպանվող **43** միավոր (**5.4** հա) և **28** միավոր (**51.6** հա) էներգետիկայի հողերի աճուրդ:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	100 տոկոս կադաստրային արժեքի վաճառքի դեպքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	Տարբերությունը	%
1.	Արագածոտն	322,055.0	343,788.0	-21,732.0	94%
2.	Արարատ	342,838.0	344,118.0	-1,280.0	100%
3.	Արմավիր	221,973.0	190,769.0	31,203.0	116%
4.	Գեղարքունիք	111,184.0	103,878.0	7,306.0	107%
5.	Լոռի	262,655.0	189,019.0	73,635.0	139%
6.	Կոտայք	706,345.0	589,223.0	117,123.0	120%
7.	Շիրակ	148,754.0	110,422.0	38,331.0	135%
8.	Սյունիք	84,607.0	46,943.0	37,664.0	180%
9.	Վայոց Ձոր	56,782.0	48,972.0	7,810.0	116%
10.	Տավուշ	179,500.0	118,941.0	60,559.0	151%
	Ընդամենը	2,436,693.0	2,086,073.0	350,619.0	117%

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ օտարված հողամասերի դիմաց գանձված գումարների հարաբերությունը դրանց կադաստրային արժեքի համեմատ ՀՀ մարզերում տարբեր են՝ այսպես օրինակ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են ՀՀ Սյունիքի մարզում **180 %** (37,664.0 հազ. դրամի օգուտ), ՀՀ Տավուշի մարզում **151%** (60,559.0 հազ. դրամի օգուտ) և ՀՀ Լոռու մարզում **139%** (73,635.0 հազ.դրամի օգուտ), իսկ ամենացածր ցուցանիշները ՀՀ Արագածոտնի մարզում է **94%** (-21,732.0 հազ. դրամի պակաս) և ՀՀ Արարատի մարզում **100 %** (-1,280.0 հազ. դրամի պակաս):

ՀՀ մարզպետների աշխատանքների գնահատման չափորոշիչների /հողերի օտարման արդյունավետություն/ համաձայն՝ **2018** թվականին ՀՀ Արագածոտնի և ՀՀ Կոտայքի մարզպետները գնահատվել էին **0.5** միավորով, սակայն վերջիններս **2019** թվականին գնահատվելու են **1** միավորով:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի մակերեսը (հա) 2018/2019		Տարբերությունը	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (դրամ) 2018	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (դրամ) 2019	Տարբերությունը (2019/2018)
1.	Արագածոտն	419	456	37	156,701,306	322,055,833	165,354,527
2.	Արարատ	271	335	64	247,251,039	342,838,350	95,587,311
3.	Արմավիր	1382	349	-1034	254,044,331	221,972,982	-32,071,349
4.	Գեղարքունիք	93	137	44	113,599,733	111,184,012	-2,415,721
5.	Լոռի	32	102	70	77,756,964	262,654,798	184,897,834
6.	Կոտայք	222	196	-26	606,554,492	706,345,542	99,791,050
7.	Շիրակ	30	72	42	100,996,901	148,753,008	47,756,107
8.	Սյունիք	45	57	11	44,031,029	84,607,079	40,576,050
9.	Վայոց Ձոր	94	72	-22	61,488,585	56,781,670	-4,706,915
10.	Տավուշ	43	126	84	112,837,145	179,499,797	66,662,652
	Ընդամենը	2633	1903	-730	1,775,261,525	2,436,693,071	661,431,546

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ 2018 թվականի համեմատ /**2633** հա/ 2019 թվականին /**1903** հա/ օտարվել է **730 հա** քիչ հողատարածքներ:

Ներկայումս հողերի աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Առաջարկում ենք աճուրդների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել նաև համայնքների, ինչպես նաև մարզպետարանների էլեկտրոնային կայքերում և հետամուտ լինել դրանց պատշաճ կատարմանը: